

## ԳՐԱԿԱՆ

## ԱՂԱՏԵՒԻ ՀՈՎՏՈՒՄ

## ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱԶՆԵՐ

Նոր տարին ինչքան մօտեցնում էր, այնքան անելի պինդ էր ձգում Դիլիջանի լեռների եւ անտառների ձիւնապատ անդորրը: «Գնամք ու գոնէ երեք օրով կտրուենք ֆաղափի աղմուկից, տօնական եռուզեռից, հոգսերից», մտածում երագում էինք բոլորս:

Մենք տասներկու հոգի էինք եւ մեզանից ամէն մէկը իւրովի էր ծրագրում եռօրեայ երանութիւնը: Մէկը օրինակ, որոշել է «հէրն անիծել» անգնութեան ու ֆեն՝, ֆեն՝ ու էլի ֆենի: Միւսը, որ Երրորդ մասի բնակիչ է, մտադրուել է ամէն օր մտնել անտառ ու շնչել այնքան, որ թոքերի վերջին քջիջն անգամ լիանայ օգոնով, ծառ ու ծաղկի, հնձած խոտի անտառում մոլորուած-մնացած բուրմուռներով: Երրորդը, որ սասունցի է ձագումով, որոշել է մենմենակ նստել լեռների դէմ եւ ազատ շարունակել ներքին ուղեւորութիւնը դէպի չտեսած «էրգիր», դէպի Ծովասար, դէպի Մարաթուկ: Իսկ Պարզ լին, Հաղարծին ու Դոշավան գնալ ցանկանում էին բոլորը:

Եւ այսպէս երանութեան երագ-ներ ...

Դեկտեմբեր 29ի յետ միջօրէ: Մանկական աշխուժով լցում ենք աւտոբուս ու քանապարհում: Սեմյոնովկա գիւղի 2045 մետր բարձրութիւնից սկսում է Դիլիջանի դժուար, վտանգաւոր վայրէջքը: Զիւնապատ, տեղ-տեղ սառցակալած քանապարհ, իրար վրայ ծալուող սրանկիւն Կեռմաններ եւ մագից կախուած

տագնապալի զգացողութիւն: Լուռ, ան-ծպտուն, ինքնամփոփ ենք բոլորս: Տարօրինակ է վտանգի սուր զգացողութիւնը մեզ տարանջատում է իրարից, վերածում ինքն իր մէջ կծկտած-պրկուած առանձին անհատների, որոնք կանգնած են քակատագրին հանդէպ բոլորովին մենակ, անօգնական . . .

Փոքր Սեւանից ոչ հեռու, Ծովագիւղի տակով, Դիլիջան տանող փապուղի են փորում: Ուղեւորների կեանքի ապահովութեան տեսակէտից նոյնիսկ ուշացած անհրաժեշտութիւն է դժուար ու մեծածախս այս փապուղին, բայց, երբ մտածում եմ, որ նոյն այդ ուղեւորները պիտի գրկուէին քանապարհի տասներկու կնիմետրանոց այս հատուածի նախաստեղծ գեղեցկութիւնները դիտելու վայելից, կար-ծես խամրում է ոգեւորութիւնս ...

Ապահովութիւն, գեղեցկութիւն ու վայելք: Ո՞ր մէկին տալ նախապատուութիւնը ... Ուշացած երկընտրանք է: Կեանքն արդէն իսկ կայացրել է վնիւր: Փապուղու շինարարութիւնն ընթացքի մէջ է:

## ԴԻԼԻՋԱՆ

Աղստեւի տափշունչ հովտի հարաւ-արեւմուտքում, Փամպակի լեռնաշղթայի լանջին եւ Բաղումի լեռների հմայուած, անկշտում աչքերի դէմ անփոյթ ցազանքով փռուել է Գուգարաց աշխարհի Գեղեցկուհին՝ Դիլիջանը:

Մեղմանուշ քաւշեայ կլիման, հովա-սուն անտառները եւ սառնորակ աղբրաջը-րերը Դիլիջանի համար շատ վաղուց ապահովել են առաջնակարգ առողջարանա-յին ֆաղափի նախանձնի համբաւ: Կլիման

առանձնապես նպաստաւոր է թոփախտի բուժման համար, եւ հէնց այդ պատճառով էլ այստեղ գործում է մասնագիտացուած հիւանդանոցների, առողջարանների, հանգստեան տների ընդարձակ մի համակարգ, ուր անուանի շատ հայ գիտնական բժիշկներ պայքարում են մարդկային գարուն հասակի ռիսքերիմ թշնամի թոփախտի դէմ:

Ամէն անգամ որ լինում եմ այստեղ, յիշում եմ հայ ֆնարերգութեան հանճարեղ ծլարձակումներ, Պետրոս Դուրեանի, Մեծարեւնցի, Պեշիկթաշլեանի, Տերեանի, Մատթէոս Զարիֆեանի եւ այլոց եղբարական նակատագրի մասին: Նրանք այս օդի, ջրի հոգատարութեան կարօտ՝ խամրեցիմ-հանգն կեանքի վաղ Գարունին, զրկելով մեզ, ո՛վ գիտէ, թէ ինչպիսի անանց Գեղեցկութիւններից ...:

Ըստ 1826 թուականի արխիվային մի տուեալի, Աղստեւի հովիտ եօթանասուն երկու գիւղերից մէկը՝ 60 տնանոց Դիլիջանը, այսօր դարձել է շուրջ երեսունհինգ հազարանոց ժամանակակից մի ֆաղափ, որի անու գարգացման ներքոյ հնարաւորութիւնները խոստանում են ւաւիլի բարգաւաճ ապագայ:

Իսկ, այնուամենայնիւ, ինչո՞ւ Մեծ Հայքի վարաժնունիք Գաւառի պատմական Հովքը՝ Հայոց Արշակունի թագաւորների ամառանոցն ու որսատեղին, այժմ կոչւում է Դիլիջան: Այստեղ, լոսած-մնջացած պատմութեան փոխարէն խօսում է Գուգարաց աշխարհի հարուստ աւանդապատումը:

Ժամանակին այս կողմերում ապրել է Դեյլի(\*) անունով մի հովիւ, որին, մի օր,

անտառում պատահոտել են գայլերը: Խեղճ մայրը, սարերն ընկած, փնտռում է կորած միևնույնարին եւ աղիողորմ ձայն տալիս. «Դեյլի՛, ջա՛ն Դեյլի՛, ջա՛ն» ... Այդ օրուանից հովուի անունով վայրը կոչւում է Դիլիջան կամ Դիլիջան:

Առասպել է: Անշուշտ: Եւ սակայն, երկնամերձ լեռների, անդնդախոր ձորերի ու թաւ անտառների այս աշխարհում առասպելը այնքան հեռու չէ կեանքից, ինչպէս կեանքը՝ առասպելից:

Պատմեմ ողբերգա-գաւեշտական մի դէպք, որ պատահել էր Դիլիջանին կիպ-կպած Գալավիկո Գիւղում, մեր այնտեղ գալուց մի ֆանի օր առաջ եւ դեռ պատմում էր բերնէ-բերան:

- «Սարաեալանջի ա՛յ էն անտառաւիջի տանից - ձեռքով ցոյց է տալիս պատմողը - Համբոն Գիշերը դուրս է գալիս, որ գնա ոտաց նանապար(\*\*): Անլոյս ձմեռ գիշեր է լինում: Լսւում է կոնու նղնղոց: Համբոն մօտ է գնում ձայնին եւ տեսնում, որ գոմից դուրս է գալիս մի աժդահա՝ թեւատակին նղնղան կոնի: «Անաբուր» (\*\*\*) գողը բռնուել էր յանցանքի վրայ: Համբոն արխային մօտենում է թիկունից, ձեռը դնում է աժդահայի ուսին եւ կծու ամօթանք տալիս. «Ախրե՛ր, էդ հայվանին դո՞ւ ես պահել, որ թեւատակ առած տանում ես: Բա՛, էդ շնո՞րհի է: Բա՛, գետինը, չե՞ս մտնում քո էդ քոյ ու քուսաթով ...»:

Գիշերային խոր լռութեան մէջ լսւում է խուլ դմբոց: Դուրս են թափւում տնեցիք ու տեսնում, որ Համբոն ուշագնաց փռուել է գոմի առաջ: Զանգում են հիւանդանոց: Շտապօգնութեան մեքենան նրան հասցնում է Դիլիջանի ֆաղափային հիւանդանոց: Նրբ

(\*) ֆաջ, անձուրաց

(\*\*) գուգարան

(\*\*\*) անամօթ

ուշգի է գալիս, պատմում է եղելութիւնը: Պարզում է, որ «անաբուր» գողը եղել է վիթխարի արջ, որ անտեղի ամօթանքի ու կոնին ձեռքից խլելու անիրաւ փորձի համար մի թեթեւ ապտակել է Համբոյին ու տարել նդնդան աւարը:

### ՀՈՎԻՏԸ

Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւելքում, թաւ անտառների, թաւշեայ քաղաքների, ձորակների, կիրճերի, խոխոչուն գետ ու գետակների, աղբիւր-ակունքների հովասուն մի դրախտիկ, որը նախախնամութիւնը աջից ու ահեակից պատել-պաշտպանել Բաղուժի, Փամբակի եւ Արեգունի լեռների ջլապինդ քաղուկներով: Հովտի կենտրոնով հոսում-գնում է անուանատու Աղստե Գետը: Փոքրիկ է, վտիտ, քայք ժիր ու գործուն, յարատեւ յամառ: Դարերի նամբորդ: Նայիդ իրեն ու նայիր դարերի տփնամեքով քացած իր հունին ... Այդ հունով, միաժամանակ, կարող է անցնել իր նման հարիւր Աղստե ... իսկ ինքը դեռ իրեն ֆարե-ֆար տալիս է, գոռում-գոչում է, ֆար ու ժայռ պոկում ու ֆշում-տանում է ... քայք, ո՞վ կ'ասի, թէ ի՞նչ է ուզում ...

Ճիշտ հայի բնոյթ: Եւ ինչո՞ւ զարմանալ: Զէ՞ որ նա գալիս է 3001 մետր բարձրութիւնից թեժ լեռան ամենաթեժ ժայռի սրտից ...:

Ահ'ա, դրախտակերպ այս հովիտը եղել է հայկական ֆաղափակրթութեան հնագոյն օրրաններից մէկը, ուրկէ Աղստեի ջրերին համընթաց հոսել է, գիտութեանց եւ արուեստների քաղմանիւղ գետը: Քաղաքակրթութեան պատմութիւնն այստեղ սկիզբ է առել մեգալիթեան դարաշրջանից, շարունակուել է ողջ միջնադարում եւ շարունակում է այսօր: Յայտնաբերուել-գրանցուել են աւելի քան 300 մեծ ու

փոքր յուշարձաններ: Պեղուել են Մեգալիթեան ու կիկլոպեան դամբարաններ, աւելի ուշ շրջանի բերդ-ամրոցներ, իջեւանատուն եւ շիրմակոթող: Գտնուել են պատմամշակութային արժէքներ կայացնող իրեր:

Աղստեի հովտի քաղաքային թանգարանում պահպանուող առաւել արժէքաւոր յուշարձաններից են Հաղարծնի եւ Գոշավանքի վանական համալիրները, իսկ պաշտպանական բնոյթի շինութիւնների կուռ համակարգից՝ «Աղեկա բերդ», «Թանիկ ամրոց», «Աշոտ Երկաթի Բերդը», «Բերդաֆարի ամրոցը», «Ուզուն Թալայի Դիտարանը» եւ ուրիշներ:

Հաւատք, մշակոյթ եւ պաշտպանութիւն՝ հայկական ֆաղափակրթութեան երեք քաղկացուցիչներ: Հաւատքի եւ հանճարի տփնամեք-տառապանքով ստեղծածը պահել-պաշտպանել կեանքով: Անողոք այս օրինաչափութիւնը չէր կարող շրջանցել ու չի շրջանցել հովտի հայութիւնը, քան զի ամենակործան չարիքը մէկ՝ թաթար-սելջուկների, մէկ՝ մոնղոլների, մէկ Օսման ու մէկ թուրքմէն ներխուժողների կերպարանքով եկել հասել է նաեւ այստեղ, յաղթահարելով ամենի լեռնաշղթաներ, ահալի ձորեր, դժուար կիրճեր, թաւ-մութ անտառներ:

Բնութիւնը նոյնպէս իր սփանջելի յուշարձաններն է ստեղծել Աղստեի հովտում: Յիշեմ վարդան Զօրավարի կաղնին: Աւանդութիւնն ասում է, որ վարդան Մամիկոնեանը Խաղխաղում տարած յաղթական ճակատամարտից տուն դարձի ճանապարհին, այս կողմերում մի ակնադրիւրի մօտ կարճատեւ հանգիստ է տալիս իր զօրքին: Մեկնումից առաջ զօրավարը շրջակայ շինականների խնդրանքով մի կաղնու ծառ է տնկում հենց աղբիւրի մօտ: Պարսիկ ներխուժողների դէմ տարած յաղթանակի այդ կանաչ յուշակոթողը տարերքի դէմ խիզախել ու

ապրել է մօտ 1500 տարի եւ միայն վերջերս կայծակը, այս էլ քանի՜ քրորդ անգամ, զարկել-տապալել է այն: Այսօր, սակայն, Վարդան Զօրավարի տապալումը կաղնու տեղում հայրենի հողի մէջ իր արմատներն է տարածում մի նոր ծառ՝ Մարաջախտ Յովհաննէս Բաղրամբանի կաղնին, իբրեւ խորհրդանշիչ հայ ժողովրդի յանրժութեան:

Բացի պատմա-նարտարապետական յուշարձաններից հոլտում ստեղծուել են դաւանաբանական, գրական, գիտական, պատմաբանասիրական, իրաւագիտական, երաժշտական յուշարձաններ որոնք մեծարժէք են ճարտարապետական հայկական քաղաքակրթութեան պատմութեան մէջ եւ որոնց կ'անդրադառնանք իրենց տեղում:

ՈՒՐ Է ԳԵՏԸ ԵՒ ՈՒՐ Է ԱՆՏԱՌԸ

Գալովինո հասնելու յաջորդ օրը առաւօտեան արեւոտ անո՛ւշ եղանակ է: Արեւի շէկ շողերի տակ պեծին տուող լեռ, անտառ ու ձոր ձգում են, կանչում: Անդիմադրելի է հրաւերը: Մենք տեղն ու տեղը որոշում ենք այցի գնալ Հաղարծին ու Գոշավանք, մուծել մեր «հարկ հոգեկանը» ինչպէս ձեւակերպեց Թալինցի Պաւղոս Սֆանչելին:

Մեկնելով Դիլիջանից, մենք Աղստելի Հովտով շարժում ենք Հիւսիս-արեւել ուղղութեամբ: Մօտ 10 կիլոմետրի վրայ, թեւում ենք ձախ: Սկսում է վերելքը անտառի միջով, Հաղարծին Գետի ափին գուգահեռ: Բայց, ո՞ր է գետը եւ ո՞ր է անտառը ... Զիւնի փափուկ, սպիտակափառ սաւանը համատարած հոգածութեամբ պատել-պարուրել է ամէն բան եւ մրսած-փշաբաղում է մի արեւնայում-հսկում է ներմակ անդորը համայնի:

Խորունկ, խորհող լուսին: Երկունքի սարսու՛ռ կայ օդի մէջ ...:

Երեւի մի այսպիսի պահ էր, երբ վանահայր քանաստեղծ ու երաժիշտ Խաչատուր Տարոնացին, ներշնչուած՝ մագաղաթին յանձնեց մեր շարակնոցի մարգարիտներից մէկը՝ «Խորհուրդ Խորին»ը.:

«Չարչարանօք քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամենայն.

Եւ մարդն վերստին անմահացաւ,  
զարդարեալ ի զգեստս անկողոպտելի»:

Այս երկնքին եւ երկրամերձ այս դարավանդին վայել վսեմական խորհուրդ ու խոհեր ... Ահ՛ա, ինչով է նա զարդարել մեներթեան իր խուցն ու ժամանակը, օրհնեալ այս հողի ու գովեալ այս երկնքի քանաստեղծ գաւակը, երբ աշխարհում միջնադար էր, հաւատաքնութիւն ու խարոյկներ ...

«Խորհուրդ Խորին, անհաս անսկիզբն ...»:

Երկունքի սարսու՛ռ կայ օդի մէջ:

ՀԱՄԱԼԻՐԸ

«... ու երկնքէն իջուցինք զայն  
ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ»  
Վահան Թէֆեեան

Խոր անտառի մէջ, գոյգ ձորակների կազմած գեղատեսիլ դարավանդի վրայ, իբրեւ բարձր պահած կանաչ սկուտեղի, տեղադրուած է Հաղարծնի վանական վեհաշուք համալիրը: Հոգեւոր ուսումնագիտական կենտրոն, որ հիմնադրուել է ու գործել XII-XIII դարերում, ծաղկում է ապրել ու հռչակուել XII դարի 30ական բուականներից, քանաստեղծ-երաժիշտ Խաչատուր Տարոնցու վանահայրութեան շրջանում: Նրա մասին ահա թէ ինչ է գրում Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց Պատմութիւն» աշխատութեան մէջ. «Եկեղեցու (Գոշավանքի) տօնախմբութեանը ներկայ էր նաեւ

Խաչատուր Տարօնցի Սուրբ Վարդապետը, առաջնորդը Հաղարծին կոչուող Սուրբ Ուխտին. այր Սուրբ Եւ հռչակուած գիտութեամբ, Եւ մանաւանդ երաժշտական արուեստով: Նա պայծառացրեց Սուրբ Ուխտը, որը իր գալուց առաջ ամայի էր Եւ խամրած: Նա Հայաստանի արեւմտեան կողմից բերեց խազը, մարմին տուեց իմաստունների ստեղծած անմարմին եղանակներին, որոնք մեր կողմերում տարածուած չէին: Նա եկաւ դրսից Եւ սովորեցրեց շատերին: Իր ծանր տխմանքներից հանգստացաւ Եւ ի «Քրիստոս Հանգեաւ» այստեղ, Եւ թաղուած է եկեղեցու արեւմտեան կողմը»:

Համալիրի կազմում են Ս. Գրիգոր, Ս. Աստուածածին, Ս. Ստեփանոս եկեղեցիները, երկու Գաւիթ, հայ աշխարհիկ ճարտարապետութեան գլուխ գործոցներից սեղանատունը, աղօթարաններ, արքայական դամբարան, խաչքարեր, տապանաքարեր Եւ պահպանուած 126 արձանագրութիւն, որոնք պատմում են մեզ հազարամեայ հնութեան, դէպքերի, իրողութիւնների Եւ մարդկանց մասին, համեստ տնտես Սիմեօնից մինչեւ Բագրատունեաց Սմբատ Եւ Գագիկ Մեծագոր արքաները, որ ապրել, ստեղծել ու երազել են այստեղ:

Ահա, օրինակ, Բագրատունի Գագիկ թագաւորին վերագրուող մի եզակի արձանագրութիւն. «Մատանի մի էր ձորն Հաղարծնի. կառուցանելով վանքս այս, Եւ եղի ակն ի վերայ»: Համալիրի կառուցման պատմութիւնն, այսպէս, սկզբնաւորում է քանաստեղծական այս չքնադ պատկերով, որում հանճարեղօրէն ներդաշնակուել են բնութիւն Եւ ճարտարապետական կառոյց: Համալիրն այժմ Եւ դիտում եմ նրա բոլոր կողմերից, հեռուից ու մօտիկից, վերեւից

ու ներքեւից, սակայն, հիացումիս սնդիկը ոչ մի չափով չի իջնում իր ամենաբարձրից ... Եւ ընդհանուր, լիակատար այս դաշնութեան համայնապատկերում տաճարը դառնում է անձեռակերտ բնութիւն, իսկ բնութիւնը՝ վեհ ու վսեմ մի տաճար: Ո՞ւմ աչքն է կատարել ընտրութիւնը տեղի Եւ ընտրութիւնը կառոյցների տեղապատշաճ ոճ ու ձեւերի: Ո՞ւմ հանճարն է չքնադ այս դարաւանդը դարձրել երկնի Եւ երկրի հանդիպման խորհրդաւոր սրբավայր ...

Հրաշքն, ինչպէս միշտ Եւ ամենուր, իրականացուել է ժողովրդի հաւաքական հանճարի, հաւատքի, սիրոյ Եւ գոհաբերութեան վիթխարի գումարով, որի մէջ իրենց լուսնն են ներդրել Եւ թագաւորը, Եւ ճարտարապետը, Եւ պարզ շինականը Եւ մօտակայ Արասաձոր գիւղի համեստ քահանաները, որոնք անվճար հիմք են փորել ու քար հայթայթել իրենց քահանայից. «Քրիստոս Աստուած ողորմեսցի Արասաձորոյ քահանայացն, որ գտնելոյս տեղս հատին ...»: Միայն այսքան՝ ողորմեսցի. Եւ ամբողջ արածի համար լիուլի վարձատրուած են թագաւորից մինչեւ քահանա:

«ԶՍիմեօն տնտես յաղաւթս (\*)

յիշեսցիք»

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»

Հաղարծնի եկեղեցիներից մէկի գաւթի առաստաղի Հիւսիս արեւելեան անկիւնում, մի բարձրաւանդակի շուրջը արուած արձանագրութիւն է: Քանդակը պատկերում է ձեռքին շերտի բռնած մի մարդու, որը վանքի ծախսարար Սիմեօն տնտեսն է: Իր «Հոգոյ արդիւնքը» ամբողջութեամբ վանքին նուիրած այս մարդը ի՞նչ է խնդրում ի

(\*) աղօթքների մէջ

«տրիտուր»: Խնդրում է, որ այս արձանագրութիւնը կարդացողները իրենց աղօթքներում յիշեն իրեն, իրրեւ մի մարդու, որ պարկեշտօրէն է ծառայել սոյն հաստատութեանը:

Ո՛վ Սիմէօն, ազնիւ տնտես, ի՛նչ լաւ է, որ դու եղել ես, ծառայել եւ անաղարտ պահել քեզ վստահուած շերեփի պատիւը: Հաւատա՛ որ քեզանից մէկ հազարամեակ յետոյ էլ քո շերեփը կը շարունակի յուշել մեզ եւ սերունդներէն՝ մաքուր ձեռքի, արդար խղճի եւ ազնիւ ծառայութեան մասին: Ուստի՝ օրհնութեամբ եղիցի յիշատակդ:

Սիմէոնը եզակի չէ վանքի արձանագրութիւններում: Ահա՛ գոհար Խաթունը. «Առաջի միաբանութեան ետու, զիմ այգին եւ շինական մի ազատ ...»: Ահա՛ կիրակոս Վարդապետը, որ վանքին է նուիրել ձօ գիրք, 'օ դահեկան, մէկ հատ շուրջառ եւ շինել է եկեղեցու դասը: Այսինքն՝ տունը է ինչ որ ունի: Մի ոմն Արտավազ տունը է «զիմ հոգոյ արդիւնս». դարձեալ՝ ինչ որ ունի: Այսպէս են վարուել ոմն Սեւադա, ոմն Աշխարեկ, ոմն Ապստամբ եւ շա՛տ ու շա՛տ ուրիշներ:

Դժուար է առանց յուզմունքի կարդալ Աղստեւի հովտում ապրած ստեղծագործած տաղանդաշատ ճարտարապետներից Մխիթար Հիւսնի ծերութեան թողած արձանագրութիւնը. «ես Մխիթար Հիւսն աշխատող այս եկեղեցւոյ ի մանկութենէ ի ծերութիւն շինեցի գտունս աղաւթից(\*), իմով որդիացելովս(\*\*) Յովհաննէսի եւ ստացայ ինձ յիշատակ Բ (\*\*\*) պատարագ»:

«Ի մանկութենէ ի ծերութիւն» տարած դժուար աշխատանքի դիմաց տարին երկու անգամ պատարագի եւ յիշատակութեան

իրաւունք. տուածի, ստացածի զգացած գոհունակութեան միջեւ ընդունուած չափի ու կշռի ինչպիսի՛ խախտում ... Բայց, այս խախտում-անհամաչափութեան մէջ չէ՞ արդեօք մեր հոգեւոր հաստատութիւնների դարաւոր գոյութեան ու մշտական պայ-ծառութեան բուն գաղտնիքը:

Ո՛չ, Սիմէոնները եզակի չեն եղել: Եղել է կամաւոր ինքնագրկումի եւ սիրայօժար նուիրաբերման անվերջ, բազմամարդ մրցութիւն, որի բոլոր մասնակիցները յաւերժ յիշելու արժանի յաղթողներ են, եւ Սիմէօն տնտեսը, եւ Մխիթար Ճարտարապետը, եւ ոմն Ումեկը, եւ ոմն Սիրաշահը, Ովասափը, Նազիսաթունը եւ անուանի ու անանուն, արձանագրուած ու չարձանագրուած բազմաբազում ուրիշներ:

Ձեր բոլորի յիշատակը, ազնիւ երախտաւորներ, օրհնութեամբ եղիցի ի կատարած աշխարհի:

Երախտագիտութեան այս մրմունջն իրրեւ աղօթք մեր շրթներին, մեկնում ենք Հաղարծնից դէպի մի այլ սրբավայր, դէպի Գոշավանք:

#### ԳԵՏԻԿԻ ԱՓՈՎ

Անցնելով Աղստեւի մէջքին թամփի պէս նստած կամրջով, իսկոյն մխրճում ենք Տանձուտի կիրճը: Մեր առաջ լեռան եւ անտառի հոծ, բարձրաբերձ պատնէշն է, որ առաջին պահ, թւում է անանցանելի:

– Ոչի՛նչ, (ասում է վարորդը) Գետիկը կը տանի կ'անցկացնի մեզ:

Եւ իրօք, Գետիկ իր մանրի՛կ, անու՛շ կարկաչով ուղեկցում է մեզ եւ դարձաբարձիկ իր ափով տանում վե՛ր, աւելի վե՛ր,

(\*) աղօթքի տուն, եկեղեցի

(\*\*) ինձ որդի դարձած

(\*\*\*) երկու

մինչև հասցնում է գոշգիւղ ու գոշավանք:

Առաջին հայեացքից զարմանք է յարուցում տեղի ընտրութիւնը: Մեր ավտոմեքենայի հեւոյն-փնչոցով բարձրացած այս լեռան ուսին բարձրացել-բազմել է նոյնքան ամենի ուրիշ մի լեռ եւ բարձրանալիս իր ոտնաթաթի հետքն է թողել նրա ուսին ...: Եւ ոտնաթաթի մեծ ութեամբ այդ տեղի վրայ էլ մարդիկ կառուցել են իրենց գիւղն ու վանքը:

Սակաւահող, սակաւաջուր, դար ու դարեր վայրենաբարոյ ներխուժողների, ական-թականի, գերեվարութեան եւ անմեղ նահատակութեան թատերաբեմ մեր երկրի պատմութիւնը չիմացող օտարերկրացիներ զարմացած՝ միշտ նոյն հարցն են տալիս,

թէ ինչո՞ւ հայերը իրենց խցկել են աշխարհից հեռու, այս քար ու ժայռերի նեղումով մէջ ...

Թեկուզ պատմեա-բացատրես, փաստեր յիշես ու վկայութիւններ բերես, ի՞նչ պիտի հասկանայ անծայրածիր Ռուսաստանի եւ միշտ ապահով-անվտանգ Ամերիկայի քաղաքացին: Նրանք եւ աշխարհն ամբողջ այդպէս էլ չհասկացան Ղարաբաղցիներին, երբ սրանք իրենց 160 հազարով դիմադարձ կանգնեցին Ադրբեջանի 7.5 միլիոնին ...

Զհասկացան ու չեն հասկանայ, թեկուզ պատմեա-բացատրես ու վկայութիւններ բերես:

(շարունակելի) ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈԻՃԵԱՆ

## Ի ԽՆԴԻՐ ԱՆԳՏԱՆԵԼԻ ՀԱՅ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒ

Աւագ Ուրբաթ՝ 1995: Երկրորդ օրն է Հալէպ այցելութեանս, քառասուն ութ տարիներու քաղաքայութեանս ետք: Վաղը, Առաջնորդարան՝ պիտի տեսնեմ թեմին առաջնորդը՝ Գերշ. Տ. Սուրեն Արքեպիսկոպոս Բաթարոյեան, որուն անցեալ շաբաթ ծանօթացայ Ս. Էջմիածնի մէջ գումարուած Ազգային-Եկեղեցական ժողովին առիթով: Սրբազանը ձմեռն իմ գրաւոր դիմումիս վրայ Առաջնորդարանի իր մէկ պաշտօնեային միջոցաւ կարգադրութիւն ըրած էր իմ եւ երեցկնոջ Հալէպ օթեւանելու առնչութեամբ, եւ առ այդ տեղեկութիւն դրկած էր ինձ անյապաղ: Երէկ քարեկամիս եւ նախկին պաշտօնակիցիս Կարապետ Ճուհարեանի քնակարանին մօտակայ նորակառոյց Ս. Աստուածածին հայ եկեղեցին գտնուեցայ այն պահուն երբ Ռումլուայի արարողութեան յանգող ժամապաշտութիւնը սկսած էր:

Ինչ քաղմութիւն դասին մէջ քաղցրագոյն երգող դեռատի մանչերու, եւ ի՞նչ խանդավառ, ինքնավստահ խումբ պատանի ուրարակիրներու՝ թեմին վրայ: Խոնուած ժողովուրդին մէջ եւ քահանաներու շարքին գիւ - անսքան եւ անմօրուս քահանայ - կը նանչնան եւ փսփսուի նիւթ կ'ընեն Նոր Գիւղ թաղի Զաւարեան Վարժարանի նախկին աշակերտներէն ոմանք:

Վաղը Ս. Զատիկի նրագալոյցի արարողութեան եւ պատարագին դարձեալ երեցկնոջ հետ պիտի աղօթեմ այս քաղաքին, սիրուն եկեղեցւոյն մէջ: Սակայն այսօր Յիսուսի առժամեայ գերեզմանը այս կամ այն եկեղեցւոյ մէջ մեծարելու փոխարէն, որոշած եմ երթալ Հայոց Ազգային Գերեզմանատունը, փնտռելու կէս դար առաջ այնտեղ թաղուած հօրս գերեզմանը: Գիտեմ որ նոյն հողին մէջ տարիներ ետք թաղուած մօրս գերեզմանին վրայ եւս